

ԱՌԱՋԻՆ ՄԵՍ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆՑԱՆԻՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ.

§ 3.

ՀԱՅ ԻՐԱՒՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԳԾԵՐԸ

Ամսւնական իրաւունքը մի ճիւղն է ընտանեկան իրաւունքի, ուստի և նախ քան թէ հայկական ամուսնութեան և նրան յարակից խնդիրների ուսումնասիրութեանը կանցնէի, կարեւոր եմ համարում այստեղ տալ Հայ իրաւունքի ամուսնական իրաւունքի և կազմակերպութեան մասին ասհրաժեշտ հետազոտութիւններ: Եւ այդ այն պատճառով, ինչպէս կտեսնենք, հայկական ցեղական իրաւունքի զուէնաւորումն ու առանձնայատկութիւնները ոչ միայն պարզելու, այլ նաև պաշտպանելու համար: Հայ Տանուտիրութեան կազմակերպութեան նախընթաց այս պատկերը և հիմունքները կարեւոր են և այն պատճառով, որ մեր ամբողջ աշխատանքի մէջ մի ամբողջութիւն, մի միութիւն լինի. իսկ այդ հարկաւոր է ամբողջ պատկերի պարզութեան համար:

Այսպէս ուրեմն, անցնենք մեր մտքերի շարայարութեանը և կէտ առ կէտ հետազոտենք հարցասիրութեան նիւթ կազմող յատուկ խնդիրները:

Հայ տունը մ'արմնատրոդ հիմնական գաղափարը.— Երբ հարց է ծագում մի ազգի ցեղական իրաւունքի մասին, ուր աբղէն զհեկավարող հիմնարկութիւնն ընտանեկան իրաւունքն ու ընտանեկան կամ տանուտիրական կազմակերպութիւնն է, պէտք է ամենից առաջ պատասխանենք այն հարցին, թէ այդ ազգի ցեղական իրաւունքի մէջ թրն է այն հիմնարկութիւնը, որի շուրջն ընտանիքն է կազմուում: Եթէ հետազոտենք, դիցուք, հոռմէական իրաւունքը, ի մասնաւորի նրա ընտանիքի կազմակերպութիւնը, մենք կտեսնենք, որ այնտեղ ընտանիքի մէջ ամեն բան տնօրինող և ամեն բանի վրայ իշխող մի կենդրոնական սկզբունք, աւելին, մի կենդրոնական հիմնարկութիւն կայ: Այդ կենդրոնական

ինստիտուտն ունի մի բարձր կամք, որին հպատակուում է ամբողջ ընտանիքը: Այդ ինստիտուտը հռոմէական Patria potestas-ըն է:

Հայ իրաւունքն, ինչպէս յետոյ մեզ համար պարզ կլինի, հռոմէական Patria potestas-ը չունի. արդ, հապա մըն է Հայ ընտանիքի այն կենդրոնական հիմնարկութիւնը, որ տան և ընտանիքի կազմակերպութեան հիմունքն է:

Հայ իրաւունքի ուսումնասիրողը կգտնի, որ ինչպէս հին արեւական իրաւունքի մօտ, այնպէս էլ հայ ցեղական իրաւունքի մէջ, ընտանիքի կենդրոնական տեղը տրամն է, կամ աւելի շուտ յերողը (օճախը): Այդ տունն ու օճախն են, որ առաջնի մարմնացումն է, որ իրենց շուրջն ունին ընտանիքի բոլոր անդամներին, ամուսիններին, օրինաւոր զաւակներին ու ամբողջ տուն ու տեղը:

Այս մտքով վերցրած, տուն—յերդ—օճախ և ընտանիք իրար հետ կազմում են մի ամբողջութիւն, մէկը լրացնում է միւրը, բայց հիմը, սկզբնականը, ղեկավարող գաղափարը օճախինն է. նա է, որ համապատասխանում է հռոմէական Patria potestas-ին և բռնում նրա տեղը: Այս մասին դեռ խօսք կլինի յետագայում:

Ինչպէս արեւական բոլոր ազգերի ընտանեկան և ազգակցութեան հիմը, ղեկավարող սկզբունքն ազնատական սիստեմն է, այնպէս էլ հայկական հին ընտանիքինն է. այդ են ասում պատմական մեր ձեռքն հասած բոլոր տեղեկութիւնները: Այդ տեղեկութիւնների հիման վրա կարելի է ենթադրել, որ ազնատական ազգակցութեան սկզբունքը հայկական իշխանական ընտանիքի մէջ աւելի խիստ ընոյթ է ունեցել, քան մնացած դասակարգերի մէջ: Այսինքն նոքա աւելի սերտ արեւնակցական—ազգակցական հիմունքներով էին ղեկավարւում իրենց ընտանեկան խնդիրներում, յատկապէս ժառանգական խնդիրներում: Սակայն ազնատական այդ սիստեմը ունեցել է իր ազգային-ցեղական ընոյթն ու գունաւորումը, ինչքան էլ նա իր հիմքում արեւական է: Հայկականի մէջ հակառակ հռոմէական արեւնակցիցներին—ազնատեների մէջ աղջիկը ոչ թէ յետին զծումն է ժառանգում, այլ նա էլ հաւասար ժառանգ է ըստ ամենայնի: Բայց որովհետեւ անշարժ կայքերի բաժանումը ցեղի նւազումն ու աղքատանալը կնշանակէր, ուստի և աղջկայ ժառանգութիւնը կամ ժառանգելն արտայայտւում էր այլ կերպ: Նա ստանում էր «բաժինը», բայց ոչ միշտ նաև անշարժ կայք. յամենայն դէպս, այն, ինչ որ նա ստանում էր, կոչւում էր և է «բաժինը», որ հաւասար է նրան հօր կարողութիւնից իրեն հասանելիքին: Բայց անցնինք. այդ առթիւ մենք ունինք դեռ մի շարք խորհրդածութիւններ:

Յատկապէս ազնւականների կողմից ազնատական սիստեմին հաւատարիմ մնալը ժառանգական նամանաւանդ խնդիրներում, ինչպէս և ամուսնական, ունի ահագին տնտեսական-քաղաքական նշանակութիւն. դրանով նորա առնում էին ոչ միայն ցեղային ստացուածքի մասնատրուելուն, կտրատուելուն, այլ նաև ամուսնութեան միջոցով ցեղի անխառն, հարազատ մնալուն: Ազգակցական ակնատական սկզբունքը, ինչպէս տեսնում ենք, ցեղի անխառնութիւնն ու ընտանեկան անշարժ կայքի միութիւնը ապահովելու հիմնական դերն ունէր: Սակայն, ինչպէս վերջը տեսանք, դա հայ ցեղական իրաւունքի մէջ իր ուրոյն կնիքն ունէր:

Ամուսնութեան միջոցով ժառանգելու այդ կարգը կարող էր իրականանալ, երբ ամուսնութիւնը մօտիկ արիւնակիցների շըրջանում կատարուէր: Չորրորդ դարից մեզ հասած պատմական մի տեղեկութիւն մեզ իրաւունք է տալիս հաւատարելու, թէ դեռ այդ դարում մերձաւորների հետ ամուսնութիւնը տիրապետող մի սովորութիւն է եղել, յատկապէս մեր առաջ բերած մտքով:

Պատմական այդ տեղեկութիւնը մեզ հասած հայ օրէնսդրութեան մի փոքրիկ բնկորն է, բայց խիստ ուշագրաւ ու հայ իրաւունքի համար խիստ նշանակալից: Պատմական իրողութիւն է, որ 365 թ. Ք. յ. Աշտիշատ քաղաքում դուստրուել է հայ ազգային մի մեծ ժողով: Այդ օրէնսդիր ժողովն զբաղուել է նաև բաներով, ի միջի այլոց և ամուսնական հաս ու չհասի խնդիրներ կարգադրելով: Իւրաքանչիւր օրէնսդիր պիտի բացատրէ, թէ ինչու համար այս ու այն օրէնքն է տրուում կամ մի հին օրէնք փոփոխուում, գործադրութիւնից հանուում: Ներկայ օրէնսդրութիւններին էլ յատուկ այդ պիծը, դանում ենք մենք Աշտիշատի ժողովի որոշման մէջ: Այստեղ մենք կարգում ենք.—

1) «Եւ ինքն երթեալ հասանէր ի կողմանս Տարօնոյ գաւառին... ժողովեցան ի դիւզն Աշտիշատ, ուր զառաջին եկեղեցին էր շինեալ զի նա էր մայր եկեղեցեացն, և ի տեղի լեալ նախնեացն ժողովոց Սիմիողոսին: Ի ժողովի հաւանութիւնս եկեալ ամենեցուն, և խորհուրդ բարեաց ի մէջ անկանէին, կատարել սնդ զաշխարհական կարգս եկեղեցւոյն և ժողովն հաւատոցն հաստատութեան: Յայնմ ժամանակի կարգեցին, կանոնեցին... Նւղի լիցին յամուսնութեան օրինաւորք, մի ստել և մի դաւ բերել իւրեանց ամուսնութիւն ընկալեալ կողմանց. և փախել աւելի 'ի մերձաւոր և յազգին տոհմակից խառնակութեան ամուսնութենէն. և նամանաւանդ 'ի մերձաւորական 'ի նուոց, և որ դամ մի այսմ նման լեալ էր ինչ.» (Փաւստոս Բիւզանդ 63, 64 երես.)

2) «Յերրորդ ամի թագաւորութեանն Արշակայ եկաց եպիսկոպոսապետ հայոց մեծն Ներսէս... ի Բիւզանդիոյ դարձեալ ի Կեսարիայ, և եկեալ ի Հայս, զամենայն կարգս ուղղութեանց, հարցն իւրոց նորոգեաց... ժողով արարեալ եպիսկոպոսաց, և համօրէն աշխարհականօք, կանոնական սահմանադրութեամբ հաստատեաց զողորմածութիւն, խլելով և զանգթութեանն արմատ, որ բնաբար սովորութեամբ էր յերկրիս մերում... Եւ զերկուսս զայսոսիկ յազգաց նախարարացն բաճայ մի՝ զմերձաւորաց խնամութիւն, զոր վասն ագահելից սեպհական տգատութեանն առնէին»... (Մովսէս Խորենացի. III. Ի 281, 283 երես):

Այստեղ հիմնականը Փաւստոսի մեզ թողած հատուածն է. Մովսէս Խորենացու տուածը, սակայն, կրկնութիւն լինելով Փաւստոսի տուածի, ունինակ բացատրական մի մասը, որ վերարբերում է այն բանին, թէ ինչ՞ա է ամուսնական այդ օրէնքը դրուած, ու նա յատկապէս հւմ դէմ է ուղղուած: Այս խնդրի վրայ աւելի երկար կանգ առնելը մեզ հեռուն կտանէր, ու մեզ դուրս կբերէր մեր իսկական աշխատանքի սահմաններից, ուստի և հետևեալ համառօտ ակնարկներով բաւականանանք:

Պատմական այդ փաստը ցոյց է տալիս, որ ազնատական սխտեմի *) հայ կարգերը խախտուել էին. որ նոքա կեանքի մէջ արդէն քայքայման վիճակի մէջ են եղել չորրորդ դարում արդէն: Մինչ այն աստիճան անժողովրդական, որ յատկապէս իշխանական տների ներկայացուցիչներից կազմուած մի ժողով հին այդ կարգերը վերացնելու ոչ միայն դէմ չէ եղել, այլ և ընդհակառակը, ձայնակցել է:

Պատմական այս հանգամանքն ունի նաև ուշադրութեան առնելու մի մեծ կողմ: Յուստինեանի օրէնքը—536 թւին տրուած մենք տեսանք, մենք տեսանք նաև վերևում առաջ բերուած հայ աղբիւրների պատմական փաստը՝ 365 թւից, այսինքն Յուստինեանոսի օրէնքից ուղիղ 171 տարի առաջ Հայաստանում, հայ ժողովի դրած օրէնքը: Ինքնին սրանով հերքւում է, զոնէ մեծ Հայաստանի համար Յուստինեանոսի օրէնքի զրդապատճառը: Բայց անցնենք, այս խնդրի մանրամասն հետազօտութիւնը այս էջերի մէջ հնարաւոր չէ անել. նա իր տեղը կգտնի մի այլ աշխատութեան մէջ: Յամենայն դէպս հայ մի այլ ուսումնասիրողի այդ խնդրի առթիւ մատնանշած Յուստինեան Ձ 21 նովեւի դըր-

*) Հայկական ազնատական սխտեմի մասին տես Karst, Zeitschr. f. vergl. Rechtsw. XX 1. S. 22, 24, 40. 41. Թէև իմ անձնական եզրակացութիւններն ու հայեցակէտը նրանից տարբեր են, ինչպէս այդ ուշիմ ընթերցողը չէ վառանդի տեսնել երկուսիս սասմներն համեմատելուց յետոյ:

խարարս Վասպուրականի, որում տուեալ էր զաւանն Տատեօնս հանդերձ ազարակօքն, և զայգին մեծ՝ յոր մտանէր առուն՝ զետ հանեալ ի ծոլէն Գալատուայ»։ (անդ. II. 62. 196—7)։

5) «Տրդատ ոմն անուն յազգէն Բագրատունեաց, որդի Սըմբատունեայ դստեր քաջին Սմբատայ... զոր իւր փեսայացոյց արքայ Տիրան ի սուտր իւր յԵրանեակ։ Որ ատեալ զայր իւր... Ընդ որ զայրացեալ Տրդատ յաւուր միում զանէ զնա... Եւ ինքն զնաց ապստամբեալ ի կողմանս ամբութեանն Մարաց և հասեալ ի Սիւնեաց աշխարհն, ժամանէ նմա համբաւ մահուանն Տիրանայ, զոր լուեալ՝ քաղարէ անդ»։ (անդ. III. 63. 197—8 երես)։

6) «... Իսկ Տրդատայ բունն հարեալ ի կինն յիւրն քարշեաց ի բազմականն... Եւ այսպէս յիւր վանն եկեալ, իսկոյն ի ձի ելեալ հանդերձ հարճիւն ի Սպեր զնաց»։ (անդ. 63. 198 երես)։ Այս հատուածը միտք է ստանում նախընթացի հետ միասին, որոշելու համար Տրդատի բնակութեան տեղը Տիրան Հայոց արքայի քրոջ հետ իբր ամուսին կենակցելիս։ Տրդատն եղել է տընփեսայ, Տիրանի քրոջ Երանեակի տանն ու կալուածներում բնակւելիս։

7) «Աստանօր դարձեալ նորոգեն զնկնգութիւնն Տիրիթ և Վարդան՝ ասելով, Գնելոյ բազում էրէս քան զայն առնել ընդ նոյն աւուրս յիւրում լերինն, որ Շահապիվանն անուանի, որ ի մայրենի հաւոյ իւրոյ Գնելոյ Գնունոյ հասեալ էր ցնա»։ (Անդ. III. 23. 287 երես)։

8) «Փառանձեմը նախանձում էր Ոլիմպեատային և հնար էր փնտրում նրան թիւնաւորելու... այդ ժամանակ գտնուեց պալատում մի քահանայ Մրճիւնիկ անունով... որ հաղորդութեան հետ թոյն խառնեց, տուեց եկեղեցու մէջ Օլիմպեադային ու նրան սպանեց... իբր պարզեւ ստացաւ նա անաստուած Փառանձեմից այդ ոչ քահանան Տարօն գաւառի մէջ այն տեղը, որից էր նա, որ Գովուհունք էր կոչւում»։ (Փաւստոս Բիւզանդ. IV. 15 գլուխ. հայերէնը ձեռքիս տօկ չունենալու պատճառով, օգտուեցի Լաուէրի գերմանական թարգմանութիւնից)։

9) «Սպանդարատ որդի Արշաւրի, քանզի ունէր երկրորդ կին Արշակունի, որ և բնակեցաւ ի նորին ժառանգութեան ի կողմանս Տարօնոյ և Հաշտենից, իբր տրտունջ զհօրեղբորէն իւրմէ եղեալ զՆերսիհէ, որոյ աղագաւ ոչ ի կոտորմանն նոցա զիպաւ»։ (անդ. III. 31. 300 երես. խօսքը Արշակ երկրորդի Կամսարականների կոտորելու մասին է)։

Հայկական Տնփեսայութեան—putrika—putra ինստիտուտի մեր համառօտ ակնարկները ցոյց են տալու, որ Հայ աղջկերը

(եղբայրազուրկ) միակ ժառանգն են եղել իրենց հօր ամբողջ կարողութեան. այսինքն ոչ միայն շարժական, այլ նաև անշարժ-տոհմային կալուածքների Այդ ինստիտուտը դեռ մինչի օրս էլ գործում է հայկական կեանքում:

Հակառակ մեր առաջ բերած բոլոր փաստերին, ինչպէս Կոլերն, այնպէս էլ Կարստ այն կարծիքի են որ «Հայաստանում կանանց սեռի շառաւիղները առ սակաւն տոհմային կալուածքների ժառանգելու իրաւունքից զրկուած էին» (Zeitschr. f. vergl. Rechtswissenschaft. XX. 1. S 25—26). Բայց պէտք է միաժամանակ խոստովանել, որ այդ յարգելի գիտնականները ծանօթ չեն եղել մեր առաջ բերած պատմական նիւթերին, յատկապէս Հայ ազգային ժողովարի կանոններին: Ես չեմ վարանիլ ասելու, որ նոքա եթէ ձեռքի տակ ունենային մեր տեղեկութիւնները, նոքա ևս նոյն հետեանքներին հասած կլինէին, ինչին որ մենք ենք հասել: Աղբիւրներից արուած քաղուածքները տեսանք: Չեմ կարծում թէ հարկաւոր լինի այստեղ այդ նիւթերի մանրագննին քննութեանը դիմել, քանի որ այդ մասին մենք այս աշխատութեան երրորդ հատուածում առանձին, թէև խիստ համառօտ, խօսելու ենք: Այդ խորհրդածութիւնների փոխարէն, սակայն, չենք կարող հետեանքների վրա կանգ չառնել, որոնք հայկական ժառանգական և բաժինքի իրաւունքների համար մեծ կշիռ և նշանակութիւն ունեն:

Ժողովրդագրական հին և նոր նիւթերի մանրագննին հետազօտութիւնն ու ուսումնասիրութիւնը հնարաւորութիւն են տալիս մեզ հետեանք գիտողութիւններն անել մեր առաջ բերած—ժառանգական և բաժինքի—հայկական ազգային իրաւաբանականութեանց մասին:

Ծառկապէս այստեղ պարտաւոր եմ ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրել մի շատ կարևոր խնդրի վրայ. և այդ այն պատճառով, որ նա հայ իրաւունքի նորմերի առաջ երբ դոքա այլ ազգերի իրաւական ինստիտուտների նման լինին, չթերահաւատի: Ընթերցողը պէտք է գիտնայ, որ բացարձակ վերցրած, չկայ զուտ ազգային իրաւունք: Երկրագնտի վրայ չկայ մի ժողովուրդ, որ իր պատմական կեանքի ընթացքում մեծ կամ փոքր չափով չազատէր այլ ազգերի և ժողովուրդների ինչպէս նաև այլ իրաւաբանականութիւններից: Նոյն իսկ հռոմէական այնքան զարգացած և խիստ ձևաւորուած իրաւունքը շատ հեռու է զուտ, անխառն հռոմէական լինելուց: Նոյնը պիտի ասենք նաև հայկական իրաւունքի մասին: Բայց սրա հակառակ կան իրարից զատ

ուրոյն յատկանիշներով իրենց խոշոր գծերով արիական ազգերի և սեմիտական ազգերի իրաւունքներ: Այս այսպէս:

Գալով ազգային իրաւունքին, այստեղ էականը նրանումն է թէ, մի որեւէ ազգ իր ընդհանուր ցեղական, դիցուք արիական (հնդաւրոպական) մի իրաւաւմբանոցութեան իր ազգային ուրոյն կեանքի մէջ ի՞նչ գունաւորումն, ի՞նչ կնիք է տուել: Այն ուրոյն կաղապարն ու ձևակերպութիւնը, որ մի ազգ կտայ ընդհանուր ցեղական մի իրաւանորմի, այդ էլ կմասնէ այդ տուեալ իրաւաւմբանոցութեան կամ իրաւական մի ամբողջ ինստիտուտի որոշ մի ազգի լինելը:

Այս աշխատութեան ծաւալը չպիտի թոյլ տայ, դժբախտաբար, որ մենք հայկական իւրաքանչիւր իրաւանորմ համեմատական իրաւունքի տուեալների բովից անցնելը ընթերցողի առջ պարզէինք: Յամենայն դէպս խիստ կարևոր դէպքերում չենք խուսափիլ անհրաժեշտ ցուցումներն անել և մօտաւոր եզրակացութիւնները ստուերագծել:

Այսպէս. այժմ անցնենք մեր մտքերի շարայարութեանը:—

Բաժինքի իրաւաւմբանոցութիւնը իր հիմնականում, դեկավարող իր սկզբունքներով նոյնն է եղել և նոյնն է հայ պատմական մեզ յայտնի դարաշրջանում, որքան էլ նա իր արտայայտութեան արտաքին քանի մի նշաններով—գիւղական և քաղաքական կեանքերում—իրականութեան մէջ զանազան կերպ կիրառուէի: Ըստ այդմ այլ կերպ էր քաղաքային և իշխանական տոհմերի աղջկերանց բաժինքի իրաւունքն ըստ բովանդակութեան արտայայտում և այլ կերպ շինական, գիւղական դասակարգի: Թէպէտ և յետագայում այդ իրաւունքները մինչի մի որոշ աստիճան մօտենում են ըստինք իրաւաւմբանոցութեան ընդհանուր անուան տակ: Ինչպէս մենք գիտենք, բաժինք նշանակում է այն բոլորն ինչ որ հայ աղջիկը տանում է իր մարդու տունը, իբր մասն իր հայրական տանից կամ ժառանգութիւն—կարողութիւնից:

Մեր բերած պատմական փաստերը ցոյց են տալիս, որ հայ աղջկերքը—այստեղ պէտք է հասկանալ ազնուական տոհմերի աղջկերքը, և ըստ իս, նաև քաղաքացիների աղջկերքը—ոչ միայն տոհմային կալուածքներն ժառանգելու (այսինքն ըստինք ստանալու) իրաւունքից զուրկ չէին, այլ նաև կարող էին տնփեսայութեան ինստիտուտի միջոցով դառնալ միակ ժառանգը տոհմական ամբողջ գոյքի և շարունակողը հայրենի տան: Դրա հակառակ հայ շինականների աղջիկները միայն շարժական ստացուածք էին իբր բաժինք ստանում ու նաև ժառանգում: Թէև տնփեսայութեան

միջոցով նաև դոքա կարող էին հայրական հողաբաժնի և տան տէրը և միակ ժառանգը դառնալ:

Այս, ըստ երևոյթիւնի, միայն տարբեր, իրաւաբաժնուհոլութիւնները լուսաբանուած են հետեւեալ հանգամանքով:—Մինչ իշխանական տները, մանր ազնուականութիւնն ու նաև քաղաքներում՝ քաղաքացիները կամ ամեն տեսակի ազատներն ունէին հողային—մեծ ու փոքր չափերով—կալուածքներ տիրելու և ժառանգելու իրաւունքներ՝ թէ իբր անհատ և թէ իբր մի տոհմ, ցեղ, այն իրաւահաւասարութիւնը չունէին հայ գիւղականները: Հայ գիւղական համայնքներում տիրում էր, սլաւոնական նման, համայնական հողատիրութիւնը: Գիւղական համայնքի ձեռքը գտնուած մշակելու և այլ հողաբաժինները պատկանում էին ամբողջ համայնքին՝ իբր համայնական սեփականութիւն՝ յարատև օգտուելու պայմանով, քանի որ, ամբողջ գիւղն իբր մի կալուածք իրապէս կազմում էր գիւղի կամ դաւառի իշխանի ժառանգական սեփականութիւնը: Այս բոլորի անհրաժեշտ եզրակացութիւնն այն է, որ շինականների աղջկերքը չէին կարող անշարժ կայքեր ժառանգել և ամուսնանալիս իրենց հետ իբրև բաժինք վերցնել: Այդ բանը տեղի կարող էր ունենալ միայն տնփեսայութեան դէպքում, ինչպէս արդէն ստել ենք:

բ) Մի տան հիմնելը համապատասխանում է տան կրակարանի (տան սրբազան սեղանի) հիմնելուն. իսկ իւրաքանչիւր տան, բայց նամանաւանդ կրակարանի, հիմնելը պայմանաւորուած է մի հարսանիքով, կամ աւելի ցայտուն կերպով արտայայտած, մի ամուսնութեան ակտով: Հայկական այս իրաւաբաժնուհոլութիւնը զուտ արիական-հնդուրոպական է, ու մենք պատահում ենք արիական բոլոր ազգերի ցեղական իրաւունքների մէջ:

Իւրաքանչիւր ամուսնութեամբ հիմնուած է մի ընտանիք, իր մայր ընտանիքի կողքին:

Այստեղ մենք չենք անցնի անմիջապէս հայկական-արիական ընտանիքի կազմակերպութեանը, դա հետեւեալ գլխի նիւթն է, բայց այստեղ առաջ կրբերենք մի փոքր խորհրդածութիւնից յետոյ հայկական տուն հիմնելու մասին մի շարք պատմական փաստեր:

Յայտնի իրողութիւն է, որ հայկական ընտանիքը բազմանդամ է. նոյնպէս յայտնի է, որ հին արիական ազգերի ընտանիքներն էլ բազմանդամ են եղել: Այն էլ է յայտնի, որ չինական ու սեմիտական ազգերի ընտանիքն էլ, որ նահապետական անունն ունի, բազմանդամ է: Սակայն այս զուգահեռ դրուած փաստերն ամենեւին չեն կարող բաւարար հիմունքներ տալ ոչ միայն հաւաստելու, այլ նաև ենթադրելու, որ այդ իբօք իբարից խիստ

հետու ժողովուրդները միևնոյն ընտանեկան կազմակերպութիւնն ունին, ու օրուայ տանուաիրութիւնը միևնոյն իրաւանորմերով է ղեկավարուում:

Ընտանեկան իրաւունքն ուսումնասիրող իրաւաբանը տանուաիրութեան կամ ընտանիքի կազմակերպութեան տարրեր ցեղերի և ժողովուրդների մօտ պատահող ձևերն իրար նմանեցնելու և նոյնացնելու համար արտաքին ձևերին նշանակութիւն կամ ամենեկին չեն տալիս և կամ առ առաւելն շատ քիչ, չնչին:

Իրաւաբանն իր որոնածը փնտռում է ընտանիքի անդամների փոխադարձ յարաբերութեան մէջ: Նրա համար, ինչպէս և ընտանիքի բնոյթը որոշելու համար, միանգամայն նոյնն է թէ տուեալ մի ընտանիք 2, 3, 5, թէ 11, 15, 40, 60 և աւելի անդամներից է բաղկացած: Իրաւաբանը հետախուզում և ուսումնասիրում է մի ընտանիքի անդամների մէջ եղած իրաւական յարաբերութիւնը և այն իրաւարմընողութիւններն ու իրաւանորմեր, որի հիման վրա կառավարում եւ կանգուն է մնում տուեալ որևէ ազգի ընտանիքն ու ընտանեկան կազմակերպութիւնն առ հասարակ:

Արեւական և սեմական ընտանեկան կազմակերպութիւնների իրաւական հիմունքները վերլուծելիս մենք կտեսնենք, որ սեմականը պատրիարխալ է, իսկ արեւականը՝ ոչ: Պատրիարխալ կամ նահապետական են կոչւում ցեղական այն իրաւունքները, ուր ընտանիքի նահապետը կամ պատրիարխը, անկախ այն բանից նոյն իսկ, թէ ընտանիքի բաղկացուցիչ մասերն իրարից անջատ են թէ ոչ, գլուխն ու տէրն է այդ ընտանիքի. նրան են հպատակւում ընտանիքի բաղկացուցիչ բոլոր մասերը: Աւելի հետուն չերթանք, բաւականանանք սրանով: Դրան հակառակ արեւական բոլոր ազգերի, ինչպէս և հայերի մէջ, ընտանիքի մի անդամի ընտանիքից զատուելուց յետոյ, անջատ իւրաքանչիւր այդպիսի ընտանիքի հօր, ծնողների կամ նոցա մահուան դէպքում ընտանիքի մեծ, չափահաս անդամի (եղբօր, հօրեղբօր) իշխանութեան տակից դուրս են գալիս: Տարբերութիւնն ակներև է, որքան և մենք աշխատեցինք խնդրի վրայից համառօտ անցնել:

Այն հանգամանքը, որ հայկական ընտանիք բազմանդամ է, որ մի յարկի տակ ապրում են հայրն իր որդիներով, թոռներով և նոցա կանանցով ու նոցանից շառաւիղած հետու արիւնակիցներով միասին, առանց որևէ արժէք տալու ներքին իրաւական յարաբերութեանը, հայ իրաւունքի խնդիրներով հետաքրքրուող մէկը *) անուանել է Հայ ընտանիքը նահապետական (պատ-

*) Խ. Սամուէլեան շէյն նահապետական գերդաստանը. Արարատ. 11. 111. 1908 թ. Վաղարշապատ:

բիրարևալ): Մինչդեռ, եթէ ընտանիքի կազմակերպութեան ընդթը որևէ անունով պէտք է յատկանշիլ, հապա ուրևմն նա, ինչպէս և արիական (հնդուրոպական) բոլոր ազգերի ընտանեկան կազմութիւնը արննակցական է: Բայց այս մասին չերկարենք. դա ապարդիւն աշխատանք է. անցնենք:

Այսպէս ուրևմն, հայ ընտանիքը բազմամարդ է. այսինքն, մենք յետոյ էլ սրանով զբաղուելու ենք, իւրաքանչիւր նոր ամուսնացող զոյգ անմիջապէս չի բաժանուում հայրենական տնից, այլ մնում է նոյն յարկի տակ: Սա կարելի է ասել մի որոշ, բայց երկար դարաշրջանի տիրապետող դրութիւնն է: Բայց այդ դրութիւնը բացարձակ տիրապետողը չի եղել ոչ շատ հին ժամանակներում և ոչ էլ ներկայ ժամանակում: Այլ կերպ առանց ցեղական իրաւունքը թողալով է մայր ընտանիքից բաժանուել, երբ և ինչ հանգամանքներով էլ լինին: Բայց այս մասին դեռ յետոյ: Այստեղ պարզ է, որ մենք զործ ունինք մի օրէնքի հետ, դա ընտանիքի ստորաբաժանման (դիֆֆերենցիացիայի) օրէնքն է:

Հայ իրաւունքի հիմնական մի իրաւաւորոնողութիւն է, որ իւրաքանչիւր ամուսնութեամբ հիմնուում է մի տուն և տանուտիրութիւն, որքան և նոր պսակուածն իր հօր տանը մնայ: Սա երբէք չպէտք է մոռանալ. այդ, պէտք է և հին հնդիկների և արիական առհասարակ բոլոր ազգերի իրաւունքը:

Որ ըստ հայկական հին իրաւունքի կարող էր ընտանիքի բազկացուցիչ մասերի ստորաբաժանումն նոյն իսկ հօր կենդանութեան ժամանակ և նրա ձեռքով իսկ տեղի ունենալ, այդ ցոյց է տալիս Հայ հին իրաւունքի ազբիւր կաղմող պատմական նիւթը:

Այստեղ թող ամենքի համար առաջուց պարզ լինի, որ պատմական այն նիւթերը, որոնց մենք օգտագործում ենք, չենք հաշուում, իրենց մէջ յիշած պատմական անձնաւորութեանց նկատմամբ, պատմական անհերքելի ճշմարտութիւններ: Մենք չենք կարող և չենք էլ պնդի, որ հայ պատմագրերի յիշած անձնաւորութիւնները իրական անձնաւորութիւններին, որ Հայկ, Արամ, և այլն պատմական վաւերականութիւն ունին: Եթէ կուզէք, դա մեզ ազամ չի էլ հետաքրքրում այստեղ: Այս այսպէս լինելով հանդերձ Հայ պատմագիրների տուած տեղեկութիւնների որոշ մասը չի կորցնում երբէք իր արժէքը իւր ազգագրական նիւթ իր լայն ըմբռնումով վերցրած:

Եւ իրօք, մեր թէ՛ն գործն է ստուգել, թէ արդեօք Հայկի, Արամի, Արայի և նոցա յաջորդների պատմութիւնը ճիշտ է, թէ միայն առասպել: Թէ արդեօք, իրօք որ հայ ժողովրդի ցեղապետը Հայկ կամ Արամենակ էր կոչուում, Բայց երբ մենք մի հին պատ-

մագրի մօտ կարողում ենք, որ Հայկն իր կնոջ ու երեխաների հետ գաղթից դէպի հիւսիս, որ ճանապարհին տուն շինեց և իր որդուն կամ թոռանը այնտեղ բնակեցրեց ու ինքը չուեց աւելի հեռուն, մենք չենք կարող անտարբեր անցնել այդ կտորի մօտով: Պատմագրի տուած այդ տեղեկութեան միջից մենք մի կողմ ենք դնում Հայկ և այլ անունները, ու վերցնում միայն բովանդակութիւնը: Այստեղ մենք խորհրդածուծ ենք, եթէ նոյն իսկ ենթադրուած Հայկի ժամանակի համար այդ պատմութիւնը, որի մէջ մի իրաւաւորունողութիւն կայ, մեծ ստուգութեան կարօտ է. յամենայն դէպս այն ժամանակի համար, երբ գրող պատմիչն էր ապրում նա մի իրողութիւն է եղել: Սա, ասում եմ, ամենավատ դէպքում: Սրան արդէն, ոչ ոք հակաճառել չի կարող:

Այսպէս ուրեմն, որքան և պատմական այդ անձնաւորութիւններն առասպելական լինին, այնուամենայնիւ նոցա անուան հետ կցուած պատմութիւնն առական պատմագրի ժամանակի հայեացքների արտօյայտութիւն է: Այսքանն արդէն ժխտել չի կարելի:

Անցնենք պատմական այդ քաղուածքներին.—

2. . . . Բայց ոմն Հայկ անուն նահապետ ազգացն ոչ հնազանդեցաւ 'ի ծառայութիւն նորա, և ոչ կանգնէր 'ի տան իւրում զպատկեր նորա»...: (Սերէոս. ա. դպր. 3 երես.).

3. Գայ հասանէ յերկիրս Արարատայ 'ի տունն որ էր նոցա հայրենի՝ զոր շինեալ էր 'ի լեռնատին »... (Անդ. 3 երես):

1. «Եւ ապա ետ զնա Հայկն կալուած ժառանգութեան կազմեայ թոռին իւրում, որդուոց Արամանկակայ»... Սերէոս. Ա. դպր. 2 երես.):

4. «Եւ Հայկ... բնակեցաւ անդրէն ազգաւ իւրով մինչև ցայժմ: Եւ 'ի ժամանակի մահուան իւրոյ. ետ զնա կալուած ժառանգութեան Գաղմեայ թոռի իւրում, որդուոյ Արամանեակայ, եղբար Հարմայի»... (Անդ. 4 երես):

5. «Ապա զնաց անտի ևս Արմանակ 'ի հիւսիսակողմն... և բնակէ անդ, և շինէ զերկիրն կալուած ժառանգութեան իւրոյ... (Անդ. 5 երես):

6. «Զկնի Արամանեակայ որդի նորա Արամայիս շինէ իւր 'ի վերայ զետեզերն տուն բնակութեան...» (Անդ. 5 երես):

7. «Եւ որդիքն Բագրատայ ժառանգեցին զժառանգութիւնս իւրեանց 'ի կողմանս արևմտից, այսինքն է Անդ՝ղ տուն»... (Անդ. 6 երես):

Պատմական այս նիւթերին կից կրկնակի կարևորութիւն են

ստանում Մովսէս Խորենացու մօտ գտնուած հետեւեալ հատուածները:

7. «Հայկ շինէ անդ տուն բնակութեան կալուածոց և տայ 'ի ժառանգութիւն Կաղմեայ որդւոյ Արմենակայ, Այս արգարացուցանէ զանգիր հին ասացեալ զրոյցս»: (Մ. Խորենացի. 1. 10 գլ. 32 եր.)

8. «Զկնի այսորիկ դառնալ ասէ Հայկին 'ի տեղին բնակութեան, և Կաղմեայ թոռին իւրում... Հրամայէ զնոյն տեղի բնակութեանն ունել նմա զառաջնոյ իւրոյ տանն...» (Անդ. 12 գլ. 37 երես)։

9. «Իսկ նորա (Արմենակայ) թողեալ երկուս յեղբարց իւրոց զԽոռ և զՄանաւազ ամենայն աղիւիւն իւրեանց 'ի կոչեցեալն Հարք... առեալ զամենայն բազմութիւնն, խաղայ յարևելս հիւսիսոյ և երթեալ իջանէ 'ի խորին դաշտավայրի մի... բնակեալ... շինէ զմասն ինչ 'ի հիւսիսոյ կողմանէ դաշտինն...» (Անդ. 38—9 երես)։

10. «Արամայիս շինէ իւր տուն բնակութեան... Եւ զորդին իւր զՇարայ, զյորովածին և զշատակեր, առաքէ ամենայն աղիւիւ իւրով 'ի դաշտ մի մօտաւորն...» (Անդ. 39 երես)։

11. «Ամասիա բնակեալ յԱրմաւիր, յետ ամաց ծնանի զԳեղամ, և յետ Գեղամայ զՓառոս արի և զՅուակ, Եւ յետ ծնանելոյ զսոսա՝ անցանէ զգետոյն մերձ 'ի լեռանն հարաւոյ, և շինէ անդ երկուս տունս... Եւ ետ զսոսա 'ի ժառանգութիւն երկուց որդւոց իւրոց, յորս բնակեալ յիւրեանց անուն զտեղիսն կոչեցին... և ինքն դարձեալ յԱրմաւիր, եկաց ամս սակաւս և մեռաւ...» (Անդ. 40 երես)։

12. «Իսկ Գեղամ յետ ամաց անցանելոց ծնաւ զՀարամայ յԱրմաւիր. և թողեալ զՀարամայ յԱրմաւիր՝ հանդերձ որդովք բնակէրն, և ինքն զնաց... Շինէ զեղբ ծովակին և թողու անդ բնակիւս... Աստ ծնաւ զորդի իւր զՄիսակ, զայր սէզ և անձնեայ... Մմա զմեծ մասն յընչից իւրոց տուեալ... սահմանս հատարէ նմա ժառանգութեանն...» (Անդ 41 երես)։

13. «Բայց ինքն Գեղամ դառնայ անդրէն 'ի դաշտ անդր, և առ ոտամբ նորին լեռինն 'ի ձորակի շինէ ձեռակերտ մի, և կոչէ անուն նորա Գեղամի, որ յետոյ 'ի Գառնկայ թոռանէ նորա անուանեցաւ Գառնի... Այս Գեղամ... հրամայեաց որդւոյ իւրում Հարմայ բնակել յԱրմաւիր», (Անդ. 42 երես)։

Մեր առաջ բերած պատմական այս մնացորդները, առանց որ մենք ուրիշների ետևից ընկնենք, պարզում են ա) որ հայկական հին ցեղական իրաւունքի համաձայն ամուսնութիւնից յետոյ տեղի է ունենում ընտանիքի ստորաբաժանումն հօր ձեռքով. բ)

հայկական հին իրաւունքի այս տուեալները համապատասխան են հին արիական ազգերի ընտանեկան իրաւունքի տուեալներին, դ) հայ ընտանիքի բազմանդամ լինելը չի հակասում այս իրաւաւորմբընտղութեանը և այդ նաև այն պատճառով, որ նոյնպիսի երևոյթներ նկատուում են արիական ազգերի նաև հին ցեղական իրաւունքի մէջ:

Մեր առաջ բերած պատմական տուեալներից մի քանիսը խօսում են յատկապէս հօր կենդանութեան ժամանակ հայրական ժառանգութեան բաժանելու մասին: Առանձին կարևորութիւն է ստանում նաև հետևեալը.—հօր (Հայկի) մահից յետոյ, նրա որդիները (Արմենակ, Յոռ և Մանաւազ) բաժանում են իրար մէջ հօր թողած ժառանգութիւնը. հօր բնակած տեղը մեծ որդին (Արմենակը) չի ստանում. նա թողնում է այն ու բնակւում այլ տեղ: Մի ուրիշ դէպքում, օրինակ Գեղամի, հայրն իր որդոցը տեղաւորելուց յետոյ իր ձեռքն է պահում հայրական տունը, որն և անցնում է իր մօտ մնացած որդուն: Եւ այլն:

Եթէ պատմական այս տեղեկութիւնները նոյն իսկ յետին (5—8) դարերի իրաւաւորմբեան արդիւնք են, էլի նոքա արժէքաւոր են. էլ չենք ասում, որ նոքա այդ ժամանակի համար նոր ծնունդ առած չէին լինիլ, այլ խոր հնութիւնից այդ դարերին անցած: Դոքա արժէքաւոր են և այն տեսակէտից, որ համապատասխանում են իրենց հիմնական սկզբունքներով նաև ներկայ տիրող կարգերին: Այս հանգամանքն արդէն ամենայաւ գրաւականն է ներկայ դեռ տիրող սովորոյթի իրաւունքի մէջ խոր հնութեան հետքեր ունենալուն:

Մի յարկի տակ բազմաթիւ արիւնակիցների ու թոռների կամ մի հօրից ծագած շատ եղբայրների ու թոռների բնակուելն ու առ հասարակ համակեցութիւնն այլ կերպ չպիտի հասկանալ, քան համակեցութիւնն մի քանի ընտանիքների, որ յաջորդաբար, ամուսնութեան միջոցով է կազմուել: Բազմաթիւ ընտանիքների մի յարկի տակն ու առ հասարակ իրար մօտ ապրելը կապ ունի մի ընդհանուր հողակտորի մշակման հետ, այսինքն գիւղական նստական կեանքի հետ: Այս հանգամանքն արդէն ինքնին ասում է, որ այդ տեսակ համակեցութիւն, այսինքն բազմաթիւ ընտանիքների մի յարկի կամ կից յարկերի տակ բնակուելը բացատրւում է ոչ միայն այդ ընտանիքների մի ծագումն ունենալով, այլ նաև ՚ի միջի այլոց անտեսական պայմաններով:

Նոյն երևոյթն, ինչպէս ասացինք, տեղի է ունեցել նաև հին արիական ազգերի մէջ. այս առթիւ խիստ շահեկան է համեմատել Leist-ի հետևեալ տողերն արդէն ասածներին հետ.—էհին ա-

բիական կանոն է ամուսնացած տղաների համար նոր տուն ու տեղի հիմնելը հօր տուն ու տեղին կից. միայն շատ որդիների և թոռների տուն ու տեղն (ընտանիքների) իրար հետ երկար ժամանակեայ և անբաժան մնալու հնարաւորութեամբ: Ապացոյցը, որ այս այսպէս է եղել, նրանուսն է որ աներկբայ նմանողութեամբ բոլոր արիական գլխաւոր ժողովուրդների կեանքի մէջ ամուսնական կեանքի սկիզբը ցոյցի ձևով արտայայտուող միևնոյն domum deductio-ն (հարսնաւ) է, և որ դրանով տուն ու տեղի (ընտանիքների) մի բազմութեան միմեանց հետ անբաժան պարելն ու նստակեաց լինելն է մեր մէջ միացնում (Jus Civile. II. S. 108):

Հոռմէական domum deductio-ն նոյնն է, ինչ որ հայկական հարսնաւը: Հարսնաւ նշանակում է հանդիսաւոր, տօնական ձևով ու աղմուկով գնալ հարսն առնել բերել փեսայի տունը, այսինքն domum deductio. Domum deductio-ն հին արիական մի իրաւաւորութիւն է, որին լիովին համապատասխանում է հայկական հարսնաւը: Սրա մասին չենք երկարում:

c) Որ հայ ընտանիքի մէջ, ինչպէս այդ նաև արիական ուրիշ ազգերի իրաւունքների մէջ էլ ապացուցուած է, տանուտէրն իբր ամուսին և ընտանիքի հայր ընտանիքի բոլոր անդամների վրայ չունի անսահման իրաւունք և իշխանութիւն դա յայտնի է: Հայ տանուտիրոջ և հօր իրաւունքները իր ընտանիքի անդամների նկատմամբ շատ մեղմ են. դա հայ իրաւունքի արիական գծերից մէկն է: Նոյն իսկ հոռմէական patria potestas-ը, չնայելով իր խիստ դաժան բնաւորութեանն, այնուամենայնիւ արիական հայրական իրաւունքի հիմնական գծերից զուրկ չէ. դժուար չէ նոյն իսկ ասել, որ այդ խիստ զիծը փոխառութիւն է, դրսից ներս մտած հոռմէական իրաւունքի մէջ այդ patria potestas-ը որքան և անսահման, նրա ստորագրուած անդամը միանգամայն զուրկ չէր նրա դէմ պաշտպանուելու իրաւունքից. բայց այս մասին չը երկարենք:

Իրողութիւնն այս է, որ հայ հօր իրաւունքը սահմանափակ և մեղմ է: Եւ ինչպէս մենք տեսնելու ենք, այդ իրաւունքը մեղմ և սահմանափակ է իր հիմքում բայց նամանականը իր կնոջ— ընտանիքի մօր նկատմամբ: Մենք կտեսնենք, որ հայ հարսը dextrarum conjunctio-ից, և նրա անմիջապէս յաջորդող domum deductio-ից յետոյ փեսայի իշխանութեան տակ տրուելուց յետոյ առաջատը մտնել զուրս գալու (առաջին գիշերն անցնելու) միջոցով գրաւում է ընտանիքի մէջ իր ամուսնուն հաւասար զիրք: Ամուսինների փոխադարձ յարաբերութիւնների և պարտականու-

թիւնների մասին մենք դեռ կը խօսենք: Այստեղ միայն ասեմ հարևանցօրէն, որ հարսի հօր տանը աղջկայ ձեռքն առնել տղին տալը, հարսին փեսային յանձնելու գործողութեան ակտն է: Իր կատարուելու բոլոր ձևերով և ներքին բովանդակութեամբ նա համապատասխանում է հին արիական ինչպէս և հոռոմեական dextrarum conjunctio-ին (Händer greifung):

Ընտանիքի անդամների մէջ եղած իրաւական յարաբերութիւնների հետեւեալ համառօտ ուրուագիծը կարող ենք այստեղ տալ:—

Այն մեղմ գիծը, որ հայկական ընտանիքի կառավարուելու գործի մէջ կայ, արտայայտուում է ընտանիքի մէջ իշխանութեան զատման կամ բաժանման սկզբունքով: Այդ իշխանութիւնը—տուն ու տեղ կառավարելու ղեկավարելու իշխանութիւնը—սիմբօլիք կերպով միայն տանուտիրոջ՝ ընտանիքի հօր և ամուսնու անձնաւորութեան մէջ մարմնացած լինելով հանդերձ, իրականութեան մէջ այդ իրաւունքը ընկնում է հօր և մօր՝ զոյգ ամուսինների վրայ, առանց որ բաժանման որոշ գիծ անցկացրուած լինի:

Իշխանութեան այդ ստորաբաժանումը խիստ կերպով է արտայայտուում, երբ ընտանիքի մէջ մեծացած որդիներ և եղբայրներ կան արդէն: Սի այնպիսի ընտանիքում, ուր բազմաթիւ որդիներ և թոռներ իրենց կանանցով և զաւակներով կազմում են մի միացեալ ընտանիք, ընտանիքի հայրը տան ընդհանուր կառավարիչն ու վերադիտողն է, հայրական իշխանութեան իրաւունքը գործում է ըստ երևոյթի: Իսկ իրականութեան մէջ չափահաս որդիներ ունեցող հօր ծնողական իշխանութիւնը խտնւում է տան մեծերի—մեծացած որդիների—իշխանութեան մէջ ու չքանում նոցա համագործակցութեան մէջ: Սրանից պարզ է, որ եթէ ծնողական—հօր ու մօր—իրաւունքն ու իշխանութիւնը, երբ տան մէջ հասած ամուսնացած որդիք ու թոռներ կան, փոխանցուում է ծնողներից որդոցը, յամենայն դէպս ըստ արտաքին նշանների նա կայ և ֆիւմ է ծնողների մօտ. պարզ ասած, այդ իշխանութիւնը նոցա մօտ միայն նիւրում է: Նրա հանգումը տեղի կունենայ նոցա մահւամբ միայն:

Թէ ըստ Հայոց հին իրաւունքի և թէ ըստ գործող սովորութեան անհրաժեշտ չէ, և զա հայկական ընտանեկան իրաւունքի ընդորոշիչ խոշոր գծերից մէկն է, որ ընտանիքի մեծի—հօր, մեծ որդու, մեծ եղբօր—ձեռքը լինի տան ամբողջ գործերի ղեկավարելն ու տնօրինելը: Տան մէջ իրարից խոշոր գծերով տարբերուող երկու դերեր կան. մէկը զուտ ընտանեկան, այստեղ մտնում են տան հոգացողութիւնը, տնտեսական խնդիրները, որպոչ

անուցանենք և ծնողները առ հասարակ ներքին ընտանեկան պարտաւորութիւններն ու իրաւունքները: Միւսն արտայայտուած է ընտանիքի դիրքով դէպի շրջապատող միջավայրը, դէպի հարեւանութիւնն ու հասարակութիւնը, դէպի վերջապէս պետութիւնը: Այս առումը, ընտանիքը հասարակական մի երևոյթ է, աւելին, հասարակական մի խոշոր ինստիտուտ: Ըստ այսմ ընտանիքը մի ղեկավարող ձեռք պիտի ունենայ իր ներսում, և իր ներկայացուցչութիւնը դրսում՝ համայնական գործերում:

Ընտանիքի իրաւունքով զբաղուող մարդը, հայ ընտանիքի ու առ հասարակ որ և է ընտանիքի բնոյթը որոշելիս, չի կարող վերլուծութեան չենթարկել այն բոլոր փոխադարձ յարաբերութիւնները և պարտականութիւններն ու իրաւունքները, որ ունին ընտանիքն ու հասարակութիւնը մէկ մէկու դիմաց մի կողմից, և ընտանիքի անդամները իրար մէջ միւս կողմից: Առանց այս վերլուծութեան չի կարելի բնորոշել որևէ հիմնարկութիւն, լինի դա ընտանիք, համայնք, թէ պետութիւն:

Այս երկու տեսակէտից վերլուծելով հայ ընտանիքի ներքին և արտաքին—համայնական—կեանքը, կստանանք հետեւեալ համառոտ պատկերը:

Հայ թէ հին կեանքի և թէ նորի տուեալները հնարաւորութիւն են տալիս ասելու, որ տան ընդհանուր կառավարութեան մէջ գործում է նպատակայարմարութեան սկզբունքը, որը բերւում է հայկական ընտանիքի ոչ թէ միապետական բնոյթից, այլ հաւասարութեան (սահմանադրական—հասարակապետական) ղեկավարող իրաւամբնոյթութիւնից: Պարզենք մտքերս.—Տունը պէտք է ունենայ զուտ տնտեսական գործերը կառավարող մէկը. մէկը՝ որ համայնական գործերին մասնակցէ. և այլն: Պատմական փաստերը ցոյց են տալիս, որ մի եղբայրը կարող է, նայելով իր ընդունակութիւններին, հասարակական—պետական կեանքի մէջ դեր խաղայ և բարձր դիրքի հասնի (Վաչէ զօրապետը Արշակ II-ի ժամանակ) և միւս եղբայրը տան և տոհմի առաջաւորը լինի, իր նախարարութեան ներքին գործերը ղեկավարէ (Նոյն Վաչէի եղբայր Վասակը): Անհրաժեշտ սկզբունք չէ, որ մեծ եղբօր որդին անպատճառ նախարարութեան կենդրոնական ժառանգը լինի. դա կարող է նաև որևէ մի եղբօր որդին լինի: Այստեղ խօսքը տան առաջաւորութեան մասին է, որն և արտաքուստ տան ու տոհմի շարունակողն է, բայց ոչ մայրատի իրաւունքներով: Նոյն պատկերն է ներկայացնում և ներկայ ժողովրդական կեանքը: Իմ անձնական դիտողութիւններս շատ զիւղերում—Շիրակում—նոյնն են ասում: Օրինակ Ղալախալա գիւղում նազարեանց

տանը, անցեալ տարի ութսունական թուականների սկզբում, հօր՝ Պետոյ քեհեայի կենդանութեան ժամանակ մեծ որդին կռաւաւարում էր տան գործերը, հանդ ու արտ. փոքր որդին մասնակցում էր տան կողմից համայնական գործերին. ասել է, տան առաջաւորը հասարակական գործերի մէջ էր փոքրը, իսկ տնտեսական— վար ու ցանքաի և այլն գործերի առաջաւորը մեծ եղբայրը: Նոյն գիւղում Ջանազանց տանը միջինի որդին (Յովհաննէսը) մասնակցում էր տան կողմից հասարակական գործերին, փոքր որդին կռաւաւարում էր վար ու ցանքսը, իսկ մեծ որդին (Ադամը) տան մնացած գործերը, առևտուրը և այլն: Նոյն գիւղում Ալաշկերտցոնց տանը մեծ եղբայրը (Մարգարը) գիւղի առաջաւորների շարքումն էր և հասարակական գործերի մասնակցողը. իսկ փոքր եղբայր Յակոբի ձեռքումն էր տնտեսական կռաւաւարութեան դեկը. իսկ երբ չափահաս եղաւ վերջինս մեծ որդին (Անտօնը), նրա ձեռքն անցաւ տան առևտուրը: Այս նոյն պատկերն է և ոչ միայն այդ ամբողջ գիւղում, այլ նաև հարևան Ուղունքիլիսայ, Թիքնիզ, Բաշ-Շիրակ, Փիրվալի և այլ գիւղերում և ամբողջ Շիրակում, Ախալքալաքում. ուր ես բոլոր գիւղերը երկու ամսի չափ շրջել եմ. նոյնն ենք տեսնում և միւս հայ գաւառներում: Փաստերի շարքը կարող էի ամբողջ երեսներ լցնել, բայց դա զուր աշխատանք կը լինէր: Նոյնն ապացուցւում է և Ազգագրական Հանդէսի նութերով ու պ. Ե. Լալայեանի տուեալներով: Ինչ որ է, անցնենք մեր մըտքերի շարայարութեանը:

Ըստ այդ, տան գործերը բաժանւում են տան չափահաս անդամների մէջ, ըստ նոցա ընդունակութիւնների: Բոլոր դէպքերումն էլ տան առաջաւորն ու տան մնացած չափահաս բոլոր անդամները տան մէջ հաւասար իրաւունքներ ունեն ու հաւասար ժառանգներն են ամբողջ ընտանիքի և տոհմի: Տան կռաւաւարելու սովորական ձևը խորհրդակցական է. ընտանիքի համար իւրաքանչիւր շուտով գործի կարգադրութիւն տեղի է ունենում ընտանիքի չափահաս անդամների նախընթաց խորհրդակցութիւնից յետոյ, ու եթէ մեծերից մէկը որևէ գործ է տնօրինել, դրա մասին ընտանիքի միւս անդամներին հաշիւ տալու պարտականութիւնն ունի: Ասել է, իւրաքանչիւր ընտանիքի առաջաւոր անդամը կռաւաւարում է տան իր իրաւասութեան ենթակայ գործերը ոչ այլ կերպ, քան ընտանիքի միւս անդամների գործակցութեամբ: Իսկ այդ գործակցութիւնը, մենք տեսանք, թէ ինչի մէջ է արտայայտւում: Եթէ միայն դեռ մարդ ու կին են, չափահաս որդիներ ու եղբայրներ չկան, տան կռաւաւարելու մէջ մարդուն կից նրա գործակիցը նրա կինն է. հօր մահւան դէպ-

քում, ծնողական իրաւունքները փոխանցում են մօրը: Բայց անցնենք:

Տան առաջաւորի իշխանութիւնը ընտանեկան գործերի կարգադրութեան մէջ, տեսանք որ, սահմանափակուած է միւսներին հաւասար իրաւունքներով ու գործակցութեամբ. բայց այդ իշխանութիւնը գործում է նաև տան իւրաքանչիւր անդամի վրայ: Պօքս զուտ ծնողական իշխանութեան մասին է, այն ստորադրելութեան մասին, որ որդիներն ունեն դէպի ծնողը, բայց յատկապէս դէպի հայրը: Այս դատելու և պատժելու իրաւունքը գործում է, քանի որ որդիները դեռ անչափահաս են, քանի որ դեռ նոքա չեն ամուսնացել, այսինքն քանի որ մի նոր ընտանիք չեն կազմել: Բայց այս դէպքում էլ ծնողի իրաւունքն անսահման չէ. Հայ իրաւունքի համար հօր՝ իր որդու դիմաց կեանքի և մահու իրաւունքը մնացել է բոլոր ժամանակների համար խորթ, օտար: Ամենամեծ պատիժը որ մի ծնող կարող էր տալ իր որդուն, նրան հայրենական տնից և օրհնութիւնից զրկելն է, բայց ոչ պապիկական կամ մօրական ժառանգութիւնից:

Բոլոր ժամանակների համար էլ, ընտանիքի բարձրագոյն դատաւորը եղել և մնացել է ընտանիքի հայրը, և այդ այն բոլոր զանցառութիւնների և յանցանքների նկատմամբ, որ գործել են ընտանիքի մէջ հօր իրաւասութեան շրջանում: Որդին դուրս է գալիս հօր իշխանութեան տակից առհասարակ վերջնականապէս այն ժամանակ, երբ նա բաժանուում է հայրական տանից և հիմնում առանձին տուն ու տեղ:

Բայց երբ մի յարկի տակ են ապրում շատ ամուսնացած եղբայրներ, ծնողն այս դէպքում լինելով ընդհանուր հսկողն ու դատաւորն իր որդոց վրայ, անկախ այն բանից, թէ տան ընդհանուր գործերն ինչպէս և իմ ձեռքով են կառավարում, իւրաքանչիւր ամուսնացած որդի կամ եղբայր կազմելով ընդհանուր մեծ ընտանիքի մէջ առանձին մի ընտանիք, նա կառավարում է իր անձնական ընտանեկան նեղ գործերն անձնիշխան կերպով՝ իր կնոջ գործակցութեամբ: Այսինքն, այն բոլորն, ինչ որ վերաբերում է ամուսնացած որդու անմիջական իր մասնաւոր ընտանիքին—իր կնոջը, որդոցը, վերջինների ժառանգական և ստացուածքային իրաւունքներին—վերաբերեալ գործերն ու դատաւորական իրաւունքներն ու ծնողական այլ պարտաւորութիւնները, ամուսնացած այդ որդուն են վերապահուած. ընդհանուր ընտանիքը կարող է միջամտել միայն այն ժամանակ, երբ այդ գործերի այս կամ այն կերպ տնօրինելը շօշափում է և ընդհանուր ընտանիքի շահերը: Մեծ միացեալ ընտանիքի իւրաքանչիւր բաղ-

կացուցիչ փոքր ընտանիքի առաջակորի, առաջին շարքում հօր կամ ամուսնու իրաւունքն ու պարտաւորութիւնն է, այն ամենն անել, ինչ որ իր անձնական ընտանիքի շահն ու բարեկեցութիւնն է պահանջում, մնալով պարտաւորութիւններէ և իրանց այն սահմաններում, որ նա ունի դէպի ընդհանուր մեծ ընտանիքը:

Իրաւական այդպիսի յարաբերութիւն ընտանիքը կազմող բոլոր չափահաս անդամների մէջ յատուկ է արիական ազգերի ցեղական իրաւունքին, որոնց թւում և հայկական իրաւունքին: Պատրիարխալ կոչւած իրաւունքին, այսինքն սեմիտական իրաւունքին իրաւական փոխադարձ յարաբերութիւնների և ընտանիքի կազմութեան արեւակցական այս ձևը յատուկ չէ:

Այստեղ հարկաւոր ենք համարում կցել, որ հայ իրաւունքին բոլոր ժամանակների համար հօր մահից յետոյ անդրանկի կամ ռամկօրէն ասած առջինկի իրաւունքը և նրա նախապատուութիւնն ընտանիքի աւելի կրտսեր անդամների դիմաց մնացել է միշտ օտար: Այս առթիւ եղած պնդումները հիմնուած են տուեալների է որ սխալ հասկանալու և է որ իրաւաբանական և իրաւական խընդիրներին հարեանցի ծանօթութեան վրայ: Էականն այն չէ, որ մարդ կարողանայ մի երևոյթ նկատել, այլ այդ երևոյթը կազմող հիմնական սկզբունքները որոշել և ղեկավարող մտքերը դուրս բերել: Առաջինկի և կրտսերագոյն որդու իրաւունքներին մենք կը դառնանք յաջորդ պրակի մէջ:

ց) Հայ մեծ ընտանիքի ստորաբաժանումը միշտ տեղի չի ունենում ամեն մի որդու ամուսնութիւնից յետոյ, թէև, ինչպէս տեսանք, Իւրաքանչիւր ամուսնութեամբ իրապէս հիմնուած է մի նոր ընտանիք, մի նոր տանուտիրութիւն: Ստորաբաժանումն կը նշանակէ և ժառանգութեան բաժանումն: Համաձայն տիրապետող հին սովորութեան, մի մայր ընտանիքի ստորաբաժանումն տեղի է ունենում բոլոր չափահաս որդիների ու եղբայրների ամուսնութիւնից յետոյ: Սա ունի նաև տնտեսական մի մեծ խորհուրդ:

Իւրաքանչիւր պսակող որդու, նամանաւանդ գիւղական կեանքում, հայրենական տանից բաժանուելն ինքն ըստինքեան առաջ կրեբէր ամբողջ ժառանգութեան բաժանումն, — բաժանումն շարժական գոյքի, մշակուող համայնական (գիւղերում) և սեփական — ժառանգական հողաբաժնի, տնային և երկրագործական գործիքների, անասունների, տան կամ շինութեան հողաբաժնի և այլն: Ընտանիքը տնտեսապէս կթուլանար, շատ դէպքերում կը քայքայուէր. դրա հետ միասին համայնքի մէջ նրա հասարակական դիրքը համապատասխան չափով կթուլանար:

Աւելորդ եմ համարում այստեղ առանձնապէս կանգ առնել

այն բանի վրայ, որ Հայերն երկար դարերի ընթացքում, թուրք-թաթարական արշաւանքների ու հալածանքներին իբր անմիջապէս հետեանք, հարկադրուած են եղել իրար մօտ ապրել, ընտանիքի ստորաբաժանումը որքան կարելի էր ետաձգել, բաժանբաժան մանր ընտանիքների համար շատ աւելի դժուար կլինէր ապրուստն ու ապրուստի միջոցներ հայթհայթելը, քան միացեալ մի բազմանդամ ընտանիքի համար: Ու եթէ բաժանուէին էլ, ինչ պիտի բաժանէին: Ինքնապաշտպանութեան և զոյութիւնը շարունակելու բնազդը նոցա կուտել էր իրար զլսի, մի օճաղի շուրջը, հայրենական մի ընդհանուր յարկի տակ: Ու այսպէս կազմուել է հայ մեծ, բազմանդամ ընտանիքը, որ թիւրքիայում դեռ այսօր էլ ապրում է գիւղերում: Յամենայն դէպս սա ազդող պատճառներից մէկն է եղել:

Բաժանման ժամանակ հայրական և տոհմական կարողութիւնից ստանում են տանը գտնուած անբաժան բոլոր որդիներն հաւասար ժառանգութիւն, քանի որ հօր կենդանութեան ժամանակ բաժանուած որդին տանում է իր հետ այն, ինչ որ իրեն է հասնում: Աղջկերքն ունին հայրական կարողութիւնից, ամուսնութեան դէպքում բաժինք պահանջելու իրաւունք, հանդամանքներին նայելով այն իրաւունքը տարածուած է նաև տոհմական ու հայրենական անշարժ կալուածքների վրայ ևս: Շատ մանրամասնութիւնների մասին հայկական ժառանգական իրաւունքի մէջ:

Անդրանկի ինչպէս և կրտսերագոյնի նախապատուութեան մասին, կարող ենք հետեւել դրութեան վրա ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրել, որից պարզ կերևայ, որ մենք այդպիսի նախապատուութիւն նա իրաւունքի մէջ ոչ միայն խաղաղ մերժում ենք, այլև չենք տեսնում: Այդ մասին խօսում է նաև պրօֆեսոր Karst-ը Սմբատի Դատաստանագրքին կից երկրորդ հատորում*):

Որդոց ժառանգելու ժամանակ ասածս այդ որդոց նախապատուութեան իրաւունքը պէտք է երևայ որևէ ստացուածքային մաս աւելի ստանալու կամ ժառանգելու մէջ: Անցնենք միառմի քննելու այդ առթիւ կարևոր հնարաւորութիւնները:

1. Բնակուելու հայրենական տան մեծ որդուն անցնելու խնդիրը.— Երբ մի ընտանիքի շատ որդիներ են բաժանուողները, ֆիզիքական անհնարաւորութեան սահմանումն է, որ ամեն որդի էլ հայրական տնից բաժին ստանայ. դա անհնար է հետեւեալ պարզ պատճառով: Հայ գիւղացու տունը շատ մասերից ու շէնքերից չէ կազմուած. սովորական գիւղական մեծ տունը բաղկա-

*) Karst. Rechtsbuch, II; S. 161.

ցած է մի մեծ տնից, որ միաժամանակ ամբողջ ընտանիքի նընջարանն ու հացատունն է կազմում. նրան կից կայ մի քիլարպահեստի սենեակ. այդ տան անմիջապէս առաջը կայ մի սրահ, որից մտնում են և դէպի տունը և մի այլ դռնով դէպի գոմանոցը: Գոմանոցում լինում է մի սենեակ—գոմի յօդայ, որ ոչ այլ ինչ է, քան նոյն գոմից կտրուած մի մասը: Այդ սենեակը ընտանիքի գոնէ մի մասի, ոչ միայն ձմեռուայ ննջարանն է, այլև հարեանների ժողովատեղին: Եթէ աւելացնենք սրա վրայնաւ ոչ խարանոցը, եթէ միայն տուեալ մի ընտանիք ոչխար պահելու չափ հարուստ է, կլրանայ ամեն բան, ու մեր առաջ կանգնած է սրանից աւելի քան 2000 տարի առաջ Քսենոֆոնի նկարագրած հայ տունը: Մի այսպիսի տուն կարող է մի կամ երկու որդոց մէջ բաժանուել. իսկ եթէ նա միջակ կամ աղքատ մի ընտանիքի մի տուն է, միայն մէկին կարող է հասնել և ոչ աւելի:

Բաժանուելու ժամանակ, եթէ հայրենական այսպիսի մի տուն անցնում է մեծ եղբորը կամ առհասարակ եղբայրներից մէկին, այն ժամանակ միւս եղբայրներն ստանում են համապատասխան մի բաւարարութիւն: Ազգայնապէս գիւղում պատահած բազմաթիւ օրինակներից կարող եմ հետեւեալն իբր ապացոյց բերել. Ալաշկերտցոնց տան մէջ երկու եղբայր բաժանուելիս, մեծն ստացել է հայրենական տունը, իսկ փոքրն իր երկու որդոցով համապատասխան նիւթական բաւարարութեամբ հայրական տան կողքին կից շինել է մի նոր տուն: Այդ եղբոր երկու որդիքը Մակարն ու Յակոբը բաժանուելիս Յակոբն ստացաւ հօր տունը, մինչդեռ մեծ եղբայր Մակարը նրա կողքին շինեց մի նոր տուն, հին տան ախոռներից մէկն ու նրա յօդէն (սենեակը) միացնելով իր նոր շինած տան հետ: Նոյնը կարող ենք ասել և Դանիլեց մասին, և Սանթոյեց, և Իրիցանց և այլն: Օրինակները բերում եմ ուսաց ախոռապետութեանն անցած Արարի նոր նահանգից ու յատկապէս պատերազմից յետոյ յաջորդող հնգամեակի օրերից: Այստեղ խօսք չի կարող լինել որեւէ նոր ազդեցութեան մասին:

Հայրենական տան փոքրութեան պատճառով չբաժանուելու դէպքում, մնացած եղբայրներն ստանում են կամ տաւար, կամ ոչխար, կամ փող, կամ ցորեն, գարի և այլն աւելի, և կամ բաժանող եղբոր համար հաւաքական ուժերով մի նոր տուն են շինում: Հայկական գիւղական մի տուն շինելն իսկպէս մի մեծ բան չէ, եթէ ի նկատ ունենանք, որ շինող ձեռքերն էլ իրենք են ըստ մեծի մասին, իսկ պատերը ցեխից ու ծածքն էլ հասարակ. ու այսպէս քչով հայ գիւղացու տունը պատրաստ է:

Բայց բան է, եթէ տունը մի քանի բաժանմունք ունի,

մեծ է, այն ժամանակն ա բաժանուում է հաւասար կերպով եղած եղբայրների մէջ. այս դէպքում կարող է պատահել, որ կենդրոնական տունը, կամ հացատունը անցնի մեծ որդուն, բայց ոչ իբր «մեծի» բաժին, այլ իբր հաւասար մասն:

Նախապատուութեան խնդիրն ինքնին չքանուում է:

2. Առջնեկն իբր այդպիսին չի ստանում ժառանգութեան աւելի մասն: Բայց պատահում է, որ մեծ եղբոր խնամքով մեծացած փոքր եղբայրները կամովի տալիս են հայրենական տունը իրենց մեծ եղբորն իբր վարձատրութիւն նրա արած խնամքների: Բայց այս դէպքում էլ ֆեսացածների համար ընակութեան տեղեր շինուում է կամ հաւաքական ուժերով և կամ որևէ մասն աւելի վերցնելու միջոցով: Պատահում է և հակառակը, որ մեծ եղբայրը բաժանուելով հայրենական տանից ու հրաժարուելով տան իր բաժնից, այդ թողնում է նա փոքր եղբայրներին; եթէ նամանաւանդ այդ փոքրերը դեռ ամուսնացած չեն: Ինչպէս տեսնում էք, այս բոլոր դէպքերն էլ կոմպենսացիաներ են:

3. Մի առանձին նախապատուութիւն, երբ հայրական կարողութիւնն են բաժանում, չի վայելում և ամենափոքր եղբայրը:

Հայ իրաւունքի համաձայն, բոլոր որդիները պէտք է հօր տանն ամուսնանան. այսինքն ամուսնութեան ծախսը ընկնում է հօր տան վրայ: Եթէ մի եղբայր չի ամուսնացած, լինի դա մեծը, միջնակը թէ փոքրը ու տան բաժանումն է տեղի ունենում, այն ժամանակ ամուսնացած եղբայրները հրաժարուում են յօգուտ չամուսնացածի իրենց հասանելի ժառանգութեան մի մասից: Դա մօտաւորապէս այն մասն է, կամ համապատասխանում է այն ծախքերին, որ մի ընտանիք կարող է անել մի որդու ամուսնանալու դէպքում: Չամուսնացած որդուն հասանելի այդ մասը կարող է արտայայտուել 'ի միջի այլոց նաև հայրենական տնով կամ նրա մի մասով, ինչպէս և տաւարով, փողով, պատրաստի ցորենով և այլն: Պատահում է, որ չամուսնացածը ամենափոքր տղէն է լինում. այս դէպքում նրա այս ստացածը, ինչպէս և մի այլ չամուսնացած որդու նոյն ժառանգական բաժինն ստանալը չի կարելի, ինչպէս շատ սխալ կերպով բացատրում են, մի նախապատուութիւն հաշուել: Նախապատուութիւն տրուում է միայն այն ժամանակ, երբ հօր մահից յետոյ որդիքը բաժանուում են, ու մայրը գնում ապրում է որդոց որևէ մէկի մօտ: Այս դէպքում համապատասխան որդին աւելի բաժին է ստանում, քան միւսներից ամեն մէկը: Բայց սա էլ, միայն առերևոյթն նախապատուութիւն է, այստեղ աւել տրւածը ոչ այլ ինչ է, եթէ ոչ այբիկ կամ մօր բաժինը տան կարողութիւնից: Այդ մասը կարող է ստանալ

և մեծ որդին և փոքրը և միւսները: Էականն այն է, որ եթէ ժամանակի ընթացքում մայրը դժգոհելով իր այդ որդուց, նրանից հեռանայ, այդ որդին պարտական է հեռացող ժօրը տալ նրա մասը կամ մի բաւարարութիւն:

Այս բոլոր դէպքերումն ևս ակելի ժառանգութիւն ստանալու մասին խօսք լինել չի կարող:

ե) Արիական հին իրաւունքի putrika putra ինստիտուտի հայկական ցեղական իրաւունքի մէջ լինելը մատնանիշ է անուս մասնապարզ կերպով, որ հայ ընտանիքի կազմակերպութիւնը զուտ արիական գծեր ունի: Խօսքս, ինչպէս ընթերցողը գիտէ, հայկական անփեսայութեան մասին է:

գ) Հայկական ամուսնութեան հիմնարկութիւնն, ինչպէս մենք կտեսնենք, իր առաջին ակտից—նշանադրութիւնից սկսած, մինչի վերջին գործողութիւնը, մինչի առաջին գիշերը իր հիմնական գրծերով զուտ արիական-ինդոեւրոպական է:

(Շարունակելի)

